ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գնումների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1521-Ն որոշմամբ հաստատված ,,Գնման առարկայի բնութագրերի հաստատման կարգի,, 6-րդ կետի պահանջները

կարգադրում եմ՝

1. 2011թ. գնումների գործի համակարգման նպատակով ստեղծել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Ղուկասյան Ա. – մարզպետի տեղակալ, ղեկավար
Բաղալյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ վարչության պետ
Սահակյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Զոհրաբյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ
Խաչատրյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Հոդաբաշյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ
Մուրադյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության մասնագետ

2. Ա. Ղուկասյանին՝ ,,Գնումների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան կազմել և մարզպետի հաստատմանը ներկայացնել 2011թ. ընթացքում ձեռք բերվող աշխատանքների, ապրանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը, եզրակացություն տալ կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և մատակարարված ապրանքների տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, կատարել վճարումներ ըստ ժամանակացույցի ընդունված աշխատանքների, մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ